հասարակ անուններ։ Ամբողջ բառարանը 400 էջ է, ուր կան և աշխարհաբառ բառեր, որոյ վերջն է ընկած բժշկական բառարան մի «Բառ Գալլիանոսի բժշկին» վերնագրով. 16 էջ։

Յորմէ յետոյ կգայ «Թարգմանութիւն գեղոց, զոր ընտրէ ալին իմաստունքն և կարգեալ յայլ լեզուաց ի մերս» 8 էջ։ Ապա կգայ հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորագրեալ սակս նորավարժիցն. բառ է գեղջուկ»։ 24 էջ և լաւ դասաւորուած։ Նաև «Թարգմանութիւն պարսից բառից, որ ի Վարդանանց պատմութեանց գրոց միջին է» 2 էջ։ Սորա կից է մի յիշատակարան, որ կըսկսի։—

«Վայ մեղաւոր, բազմաչարչար, և հոգնատանջ վտարան դի և տարակոյս . . . և այսպիսի դատարկ բանին հետևեցի։ Վայ, վայ և հազար վայ։» «Գրեցաւ թվին ՌՃ. ամին ես անարժան Սարգիս աբեղայս առի . . . յիշատակ . . . ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ կաթուղիկոսի և ի թագաւորութեան փոքր Շահաբասին ի թվականութեանս մերում ՌՃԺ երկու ամին. ի Մեծափառս Ս. Աստուածածէջ գահուն Էջմիածնի . . .»

Զծամակալս, որ է մազկապն

Զպսակակալս, ճոպինդ կամ պսակ յոսկւոյ սրբոյ

Զմահիկս, որ է վզնոցն

Զզարդերեսացն, երեսնոց կամ ծարոյրն կամ սնգոյրն

Զքօղէս, որ յարմնկին վերևն, օղ ոսկի

Զապարանջան, արմնջանս կամ սլվին Զկինարս

Զմեհեւանդն, որ է օղիվիզ կամ շղթայս նափածու

Զմատանիս

Զկշտապանակս, զորս փարիզա ասեն կամ կոճակներն է զորամպարինա ասեն, որ ի կուշան ի սիրտն։

Զհեղանակս, որ է գօտոյն փոկերն. որ ի կախ կայ

Զեղրածիրանին, և զմիջնածիրանին, ծածուկ յայտնի զգեստն

Զառտնին արկանելին, որ սարաղուճ, կամ լութակն է, որ է ծածկոյթ հերաց գլխոյն, կամ մետակն է, որ է բռուփակն.

Զերևելի լակոնացին, որ է փիլոնն, այսինքն հաջաղն կամ շարշէաճն։